

ՏՐՈՒԲԱԴՈՒՐՆԵՐԻ ՊՈՆԶԻԱՆ

Վ. Պ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պրովանսի տրուբադուրների քնարերգությունը պատկանում է միջնադարի համաշխարհային գրականության առավել հետաքրքիր երևույթների թվին: Այն նույնքան մեծարժեք է, որքան գերմանական միճնեզիճեդերների պոեզիան, արևմտաեվրոպական վագանների գրականությունը, պարսկա-արաբական քնարերգությունը և հայկական տաղերգությունն ու հայրենները: Պրովանսի պոեզիան ոչ թե սոսկ պատմական, այլ համամարդկային և հավերժական գեղարվեստական արժեք ունի: Այն զարմանալի նրբահյուս ու նրբակերտ ձևի մեջ տալիս է մարդկային հոգու, անհատի ներաշխարհի խոր ու ճշմարիտ նկարագիրը: Իր էությանմբ, լուսավոր գաղափարներով, աշխարհի նկատմամբ դրսևորած անպարփակ սիրով այն անջատվում է ասկետական միջնադարից՝ հաստատելով մարդու սիրելու և կյանքը վայելելու իրավունքը:

Այդ քնարերգությունը առաջացել ու ծաղկել է Ֆրանսիայի հարավում՝ Պրովանսում: Որոշակի են ոչ միայն նրա տարածքային, այլև ժամանակագրական սահմանները, չնայած տրուբադուրներից ոչ մեկը, բացի Գիրաուտ Ռիկիերից (13-րդ դ. երկրորդ կես), չի թվագրել իր բանաստեղծությունները: Առաջին տրուբադուրները ստեղծագործել են 11-րդ դարի վերջերին, վերջինները՝ 13-րդ դարի 2-րդ կեսին¹: 13-րդ դարի մայրամուտը նաև տրուբադուրների քնարերգության վերջալույսը դարձավ: Այդպիսով, Պրովանսի պոեզիան ստեղծվել է երկու հարյուրամյակի ընթացքում: Նրա լեզուն այժմ գրեթե մահացած պրովանսալերեն² է, որը պատկանում է ոտմանական լեզվախմբին: Տրուբադուրների երգը դեռևս այն ժամանակ մեծ ժողովրդականություն է վայելել. որոշ տրուբադուրներ ունեցել են իրենց ձիավոր շքախմբերը, որոնք նրանց նրանց ուղեկցել են Արևմտյան Եվրոպայի (Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա, Անգլիա) արքայական պալատներում ու իշխանական դղյակներում: Այդ երգն ունեցել է նաև իր հատուկ կատարողները. դրանք, այսպես կոչված, սերկամոնները և ժոնգլորներն էին, միջնադարյան Եվրոպայում թափառող նվագածու երգիչները: Լոմբարդիայից մինչև Իոլանդիա և Կաստիլիայից մինչև Բրաբանտ— ահա այդ երգի տարածման սահմանները:

Պրովանսի քնարերգությունը մեզ է սվանդվել, անշուշտ, ոչ ամբողջությամբ. պահպանված երգերի քանակը այժմ հասնում է երկու հազար հինգ հարյուրի, որոնց բնագրերը հրատարակված են: Նրանց մի փոքր մասը թարգմանված է ռուսերեն:

Քրիստոնեական միջնադարում, երբ իշխում էին եկեղեցական աշխարհայեցությունը և դասային նախապաշարումը, երբ հոգևոր գրականությունը կլանում ու իրեն էր ենթարկում մարդկային մտքի էներգիան՝ ամեն ինչ հանգեցնելով Քրիստոսին ու «եղևնային» թագավորությանը, երբ մարդու մտավոր ճիգերը նրան տանում էին դեպի ճգնակեցություն ու խորհրդապաշտություն, դեպի վանականի ու վարդապետի խուցը,— պոեզիայի համար այդ մղձավանջային ժամանակներում ինչպե՞ս առաջացավ տրուբադուրների երգը: Դա խաչակրաց արշավանքների բուռն շրջանն էր: Եվրոպայում ձևավորված ասպետության «ավելցուկ ուժը», թևավորելով սենյորներից ու արքաներից դժգոհ և սոցիալական պայքարի համար պատրաստ աշխատավորական զանգվածներին, գալիս էր Արևելք՝ մուսուլմաններից ազատագրելու Երուսաղեմը՝ Քրիստոսի կյանքի ու գործունեության հետ կապված այդ արթավայրը: Խաչակրաց արշավանքները Եվրոպան ու Ասիան կապեցին իրար: Այդ կապը, ռազմական ու քաղաքական նշանակությունից բացի, ուներ նաև մշակութային ու գաղա-

¹ Տե՛ս «Песни трубадуров», перевод со старопровансальского А. Наймана. М., 1979, էջ 6:

² Ներկայումս պրովանսալերենը Ֆրանսիայի հարավի փոքրաթիվ մի բնակչության մայրենի խոսվածքն է:

փարսկաճ Ըշանակություն: Արևելքի աշխարհիկ պոեզիան (արաբական, պարսկական) խաչակիրների միջոցով ընկալվում ու ներգործում էր քրիստոնեական Եվրոպայի վրա: Արաբները 8-րդ դարից սկսած տիրում էին Պիրենեյան թերակղզուն: Իսպանիայից եվրոպական ժողովուրդներին էր հասնում ոչ միայն արաբական զենքի շաշունը, այլև արաբական խոսքը³: Ուրեմն՝ Արևելքի և Անդալուզիայի արաբալեզու քնարերգությունը դարձավ արտաքին այն գործոնը, որն արթնացրեց Պրովանսի մուսային: Մյուս կողմից, տրոբադուրների երգը, ինչպես հետագոտողներն են ցույց տվել, զարգացավ ողմանական ժողովուրդների բանահյուսության բարեխոս ազդեցությամբ: Արտաքին գործոնը, այդպիսով, սոսկ մի կայծ էր, որն ընկնելով այրումի պատրաստ պրովանսյան աշխարհը՝ քնարերգության հողեհ առաջացրեց:

Երբ ծանոթանում ենք տրոբադուրների համառոտ կենսագրականներին, որոնք կազմվել են 13-րդ դարում և, ճշմարտության ու պատմական հավաստի տվյալների հետ միասին, պարունակում են նաև սենսավանական ու ոչ ճշմարիտ տեղեկություններ, անհրապակա վանդություններ,— նկատում ենք, որ այդ երգիչները տարբեր խավերի ու դասակարգերի ներկայացուցիչներ են՝ արքաներ, բարձրաստիճան և ստորին հոգևորականներ ու վանականներ, սենյորներ ու իշխաններ, ֆեոդալներ, հերցոգներ ու ասպետներ, նաև ոչ տոհմիկ մայրիկ՝ թափառիկ երածիշտներ (ժոնգլորներ), ծառաներ ու ճորտական կախում ունեցող հպատակներ, տղամարդկանց հետ՝ նաև կանայք: Հաշվել են, որ ըստ պահպանված անունների նրանց թիվը հասնում է շուրջ 500-ի, որոցից, մասնավաճ, 40-ը Ըշանակուր քնարերգուներ են⁴: Հիշենք դրանցից մի քանիսին՝ Գիյոմ Ակվիտանցի, Ջաուֆրե Ռյուդել, Մարկաբրյուն, Բեննարտ դը Վենտադոն, Պեյրե Օվենացի, Ռայմարտ Օրանցի, Գիրաուտ դը Բոռնել, Առնաուտ Դանիել, Բերտրան դը Բոռն, Դոփին Օվենացի, Մարիա դը Վենտադոն, Իշխանուհի դը Դիա, Գիյոմ դը Կաբետան, Սորդել, Պեյրե Կարդենալ և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը կյանքի իր յուրահատուկ ընկալումն ունի, իր ինքնատիպ գեղարվեստական մտածողությունը, իր անհատականությունը: Բայց որքան էլ նրանք տարբերվում, առանձնանում են իրարից, այդուամենայնիվ, միավորվում են իրար հետ. դասային տարբերությունները չեն իսնգարել նրանց՝ պոեզիայի լայն ճանապարհին ձեռք մեկնելու միմյանց, շարունակելու և զարգացնելու պրովանսյան քնարերգության ավանդույթները: Կարդում ես այդ բանաստեղծությունները և ապշում նրանց հարգայից, ասպետական վերաբերմունքի վրա դեպի կյանքի երևույթները, դեպի մարդը և, առանձնապես, դեպի կինը: Այդ քնարերգությունը կնոջ մեծարանքն է, նրա աստվածացումը, խոնարհումը նրա առաջ: Գրականագիտության մեջ այդ վերաբերմունքը բնութագրվում է «կուրտուազական» վեսն ածականով, որին հայերենում փոքր-ինչ համապատասխանում են «մեծարական» և «քաղաքավարական» բառերը: Կինը կամ, ինչպես տրոբադուրներն են անվանում, դոնանա երգչի համար սիրո աստվածուհի է, որին նա պաշտում է՝ կատարելով, կարծես, նրա սիրուց թելադրված տանձաբանյա պատվիրաններ: Աեր, նվիրում, հավատարմություն...— բոլոր տրոբադուրների համար պարտադիր բարոյական այս նորմերը հաճախ նրանց երգերում դրսևորվում են արտահայտչական ու պատկերավորման միևնույն միջոցներով, նույն համեմատություններով, բայց երբեք վերացական ու շարուն չեն դառնում շնորհիվ այն բանի, որ ամեն մի տրոբադուր իր սիրո աշխարհն է ներկայացնում. նրանց սերը ոչ թե գրքերից է գալիս, ոչ թե սովորովի է կամ մտքի մարզանք ու խաղ, այլ նրանցից ամեն մեկի կենսագրությունից թխող կենսական կենդանի զգացմունք: Այդպես ինքնատիպ են նրանք նաև այլ թեմաներ ու խնդիրներ արժարծելիս:

Պրովանսի բանաստեղծներն ստեղծագործել են տարբեր ժանրերով ու քնարական երգի տարատեսակներով. դրանցից ամենաբնութագրականներն ու տարածվածներն են՝ կանտոն, այլա, պաստուրել, բալլադ, տենսոն, պարտիմեն, ողբ, սիրվենտ: Կանտոնը տրոբադուրների սիրավառ սրտի երգն է, դոնանայի գեղեցկության ներքոյնը, նրա նկատմամբ երգչի նվիրումի ու խենթ սիրո արտահայտությունը: Այլաճ արշալույսի տաղ է, նկարագրությունն այն պահի, երբ սիրո վայելքից ինքնամոռացության մեջ ընկած երգչին տազնապալից ձայն է տալիս Կահակը և նախագոչաջնում, որ շտապի բաժանվել իր դոնանայից: Պաստուրելը իղիլիկ բնության մեջ հովվուհուն ներկայացնող բանաստեղծություն է, հովվուհուն և ասպետի երկխոսությունը: Տենսոնն ու պարտիմենը վեն, տրամախոսություն են, որ վարում են երկու տրոբադուրները: Բալլադը քնարական պարերգ է: Սիրվենտը քաղաքական, բարոյախոսական և կամ կրոնական քերթված է, իսկ ողբը՝ վախճանվածի հիշատակին նվիրված եղերերգ:

Տրոբադուրների քնարերգության ամբողջ հմայքը պայմանավորված է սիրո երգով:

³ Հմմտ. «Песни трубадуров», էջ 4:

⁴ Տ՛՛՛՛ «Зарубежная литература средних веков», М., 1974, էջ 159:

Ավելին, կարելի է ասել, որ Պրովանսի երգիչները եվրոպական պեդագոգիկ առաջինը մշակեցին սիրո զգացման ու ասիրումի այն նախատիպար ձևերը, որոնց հետևեց միջնադարյան սիրո բանաստեղծությունն Արևմուտքում: Սիրած էակի նկատմամբ ոռմանտիկական հիացմունքը, կուրտուագական վերաբերմունքը տրուբադուրներից անցավ հետագա բանաստեղծներին, անգամ Վերածննդի դարաշրջանի սիրերգակներին (Ֆրանչեսկո Պետրարկա, Ֆրանսուա Վիյոն, Ռոնսար և ուրիշներ):

Ո՞րն է Պրովանսի սիրո քնարերգությունը: Ծանոթանանք տրուբադուրների սիրո պատմությանը:

«Սերը գերագույն մի շնորհ է, կախարդական ուժ,— գրում է Բեռնարտ դը Վենտադորնը (ստեղծագործել է 1147—1170 թվականներին),— որն ինձ ծաղիկ է պարզում, երբ դուրսը դաժան ցուրտ է ու ձմեռ: Թե՛ ոռնոցը քամու, թե՛ հեղեղն անձրևի, ամեն, ամեն քան ինձ հանույք է բերում: ... Սերն այնքան գորեղ է, այնքան լի կրակով, որ, զարնան պես, սառույցներն անգամ կլանի է կոշում»⁵: Ուրեմն՝ սերը կենարար մի ուժ է, որ կենդանացնում է մեռած բնությունը, նրան պարզևում յիսամրող գեղեցկություն: Ակամայից հիշում ես սիրո հայ ասպետի՝ Սայաթ-Նովայի տողերը.

**Լսօր իմ յարին տեսա բաղչի մեջն ման գալով,
Քեղինն զարթարվեցավ իմ յարի օսկե նալով:**

Սերը տրուբադուրի համար ուժեղ զգացում է, ամեն գեղեցկի սկիզբն ու էությունը: Եվ ահա այդ սերը տրուբադուրին է երևում դոննայի անբիժ տեսքով: Ողբերգականն այն է, որ դոննան ամուսին ունի և հասարակական ավելի բարձր սանդղուղթի վրա է կանգնած, քան նրան սիրահարված երգիչ-ասպետը: Դրա համար էլ վերջինս, որ, ինչպես բոլոր մյուս տրուբադուրները, ամուսնացած չէ, նրան դիմում է ոչ թե դու-ով, այլ Դուք-ով: Եվ դա ոչ այնքան երգչի ծագման, որքան նրա կնամեծար վերաբերմունքի արտահայտությունն է:

«Սիրահարների հավասարությունը բարձրագույն օրենք է»,— ասել է կին տրուբադուրներից մեկը՝ Մարիա դը Վենտադորնը (մեռել է 1225 թ.)⁷: Բայց այդ տրուբադուր Բեռնարտ դը Վենտադորնը, ընդհակառակն, իր սիրուհու հանդեպ իրեն ծառա ու ճորտ է զգում. «Թեկուզև աստված հրամայի, որ ինձ թագավոր ընտրեն, կամ կարգադրի, որ ինձ ենթարկվի համայն աշխարհը, բայց ինձ՝ արքայիս համար, մինչև զլուխս պե՛հեր դառնա, մինչ խոր ծերություն, միայն նա՝ դոննան, կլինի միակ տեղը, սենյորը, ես՝ արքաս, սուկ նրա հպատակն եմ...» (էջ 16):

Կամ մի ուրիշ տեղ խոստովանում է.

**Ես իմ դոննայի ձեռքին գերի եմ
Եվ դոննայի մեջ աշխարհն եմ գտնում: (էջ 18)**

Իսկ ի՞նչ է նրա ցանկությունը: Ուզում է, որ դոննան իրեն գեթ մի փոքր ուշադրության արժանացնի.

**Պատահաբար թեկուզ նայի՝
Սիրտս իրենից գոհ կլինի: (էջ 9)**

Դոննան ամենաշատը հավակոչեալ ժպտում կամ սիրալիր հայացք է գցում նրա վրա: Համբույրը համարվում է արդեն բարձրագույն պարգև: Եվ տրուբադուրին թվում է, որ դոննան իրեն... սիրում է: Այդ հավատը նրան այնպես է արթնցրել, որ նա մտքով էլ չի անցկացնում, որ աշխարհում նաև ուրիշ դոննաներ կան.

**Միայն մի կնոջ՝ իմ Դոննային եմ ես երկրպագում,
Իսկ մյուսների գեղեցկությունը
Աչքերս տեսնել անգամ չեմ ուզում: (էջ 12)**

Նրա համար հայ միջնադարյան երգչի երկվությունը չկա, որը մի հայրենում տարակուսած ասում էր.

⁵ Бернарт де Вентадорн. Песни. перевод и подготовка издания В. А. Дынкин, М., 1979, с. 9.

⁶ Սայաթ-Նովա, Խաղեր, Ե., 1987, էջ 25:

⁷ Бернарт де Вентадору. Песни, с. 156. Այսուհետև սույն գրքից կատարվող մեջբերումների էջերը կհշենք վերևում՝ փակագծերում: Բանաստեղծությունների տողացի թարգմանությունները հոդվածի հեղինակինն են:

Երկու եարուկ զիս կուզէ, չգիտեմ, թէ որն է սիրուն,
Մէկն՝ ցերեկուան արև, մէկն՝ լուսին մութն զիշերուն...⁸

Եվ տրուբադուրներից մեկին՝ բարձրատոհմիկ Բերտրան դը Բոննին (մեռել է 1215 թ.), որը ժամանակակիցն էր և հակառակորդը անգլիական արքա Ռիչարդ Առյուծաբախի (1157—1199 թթ.), և սիրո կանտոններից ավելի ռազմի երգեր է հորինել՝ պատերազմի կոչ հղելով արքաներին ու բարոններին և ինքն էլ խոստովանելով՝

Մի բանով եմ ես իմ կյանքում տարվել՝
Կռվել, հարձակվել ու սրամարտել,—

ահա այդ Բերտրանին բախտ է վիճակվում ինչույցի նստել երազ-դոճնայի հետ՝ տեղ գրավելով նրա կողքին: Բերտրանը գույներ չի խնայում պատկերելու նրա չքնառ, միայն եվրոպացի ազնվական տիկնոջը վայել գեղեցկությունը.

Նրա հայացքը ասես թրթռ է,
Եվ արքայական խնջույքում հիմա,
Ինչպես որ տերն է տվել հրաման,
Տեղ եմ գրավել հենց նրա կողքին,
Ըստ պատշաճ կարգի՝ նստել այս բարձին:

Ո՛չ շարժումնում և ո՛չ բառերում—
Ո՛չ մի բանի մեջ կեղծիք չեմ տեսնում.
Իր խոսքերի մեջ նրբանկատ է,
Իր ոճը Ֆանժի դամաներինն է,
Զրույցի կերպը՝ կատալոնական:

Ատամներն, ասես փոքրիկ սառույցներ,
Ծիծղուն շուրթերում փայլատակում են,
Այտերի մաշկը կարմիր ու թարմ է...
Ինձ պետք չեն գանձերը Խորաստանի,
Միայն, միայն թե նա իմը լինի⁹:

Բայց տրուբադուրի մարտը ու եթերային սերը միջնադարյան կյանքի բավիղներում հանդիպում է խոչոխությունների: Նա կանխազգում է իր սիրո տխուր վերջաբանը.

Ահ ու սարսափից ծանրագույնը կա՝ մեր բաժանումը: (Էջ 18)

Բարությանը ու հումանիզմով տոգորված երգիչը, ինքնախաբեության մեջ, դոճնայի ստանության ու անտարբերության պատճառը և իրենց ողբերգության բուն ակունքը փորձում է որոնել արտաքին հանգամանքների մեջ, դոճնային չի ուզում մեղադրել:

«Էն գլխից բախտը մեզվից»՝ երկուսիցս, երես է թեքել. երջանկությունը մեզ վիճակված չէ: Հուսահատություն և ուրիշ ոչինչ» (Էջ 14),— տխրությանը գրում է Բեռնարտ դը Վենտադոնը: Սակայն միջավայրին ու հանգամանքներին իրազեկ լինելը նրան հասցնում է ավելի արտամոռնոք եզրակացության. դոճնան ինքն է դավաճանել տրուբադուրին.

Ում որ քարասիրտ Դոճնան է գերել,
Ծանր ափսոսանք ու վշտի փուռ է
Սրտում զգացել: (Էջ 14)

Տրուբադուրը, այդուամենայնիվ, դեռ հույս ունի վերադարձնել կորցրած սերը.

Բայց սիրտս խինդով նորից կխայտա,
Թե որ Դոճնան ինձ պարզապես ծպտա
Կամ արժանացնի
Սոսկ կոմպլիմենտի: (Էջ 14)

Ու այդ սերը, կապույտ թռչունի նման, թռել-սլացել է հեռո՛ւ, հեռո՛ւ՝ թևաթափ անելով երգչին: Եվ հիմա, քանի որ սերը չկա, էլ ի՛նչ կյանք, մահվան ուրվականն է երևում նրան.

Ա՛յա, Դուք դաժան եք, մի՛նչդեռ ամենքը
Ձեզ մեղմարարո ու հեզ եմ կարծել,

⁸ «Գուսանական ժողովրդական տաղեր», աշխատասիրությանը Մ. Արեղյանի, Ե., 1940, էջ 114:

⁹ «Лесен трыбадуров», с. 100—101.

Եվ դարանակալ մահն է իր գեները
Ծարժում: Ավա՛ղ, իմ վախճանն է հասել: (էջ 15)

Դոճնայից խաբված տրուբադուրի համար սիրուն հրաժեշտ տալը նույնն է, թե հրաժեշտ տալ բանաստեղծի իր քնարին:

Միայն Տրիստանն է հասկանում,
Թե իմ ճամփան ուր է տանում.
Վե՛րջ իմ սիրուն, իմ երազին,
Մճաս բարո՛վ,
Երգող իմ տող: (էջ 64)

Սերը հոգու կրակից է ծնվում և, իր հերթին, ծնում երգ ու տաղ: Այդ լավ է գիտակցել հեռնարտ դը Վենտադուրը, երբ գրել է.

Սերն ու երգը միանման են.
Առանց կրակի երկունս էլ մեռնում են: (էջ 76)

.....

Եթե սրտիս բոցը հանգցնեմ,
Ես էլ ինչպե՛ս երգ հորինեմ: (էջ 76)

Երբ ծանոթանում ենք Պրովանսի քնարերգությանը, ապա հանգում ենք այն ճշմարտությանը, որ նրա մեջ արտահայտվում է ոչ այնքան վայելքի ձգտումը, որքան սիրո որոնումը: Այդ որոնման, ձգտումի, երազանքի մեջ է նրա գեղեցկությունը: Ոչ մի անվայելույ՝ միտք, անվատշան արտահայտություն չես գտնում այնտեղ: Տրուբադուրներն իրենց սիրո րմբոնումով չեն խախտում բարձր բարոյականության սահմանները, ավելին՝ նրանք հաստատում են այդ բարոյականությունը, առաքինությունը: Նրանց «սիրո արվեստը» հեռու է ճղճիմությունից ու սովորական, առօրեական ապրումներից: Նրանք չեն սիրում տխրությունը, նաև այն երջանկությունը, որն անթախիծ է լինում: Հիշենք Պելյուրի (ստեղծագործել է 1180—1225 թվականներին) գողտրիկ բանաստեղծության ավարտը.

— Ա՛խ, սենյոր, ա՛խ,
Ավելի լավ է առանց սզի,
Չեմ սիրում տխրությունը:
— Ա՛խ, Պելյուր, ա՛խ,
Բոլոր սուգերից ամենավատն է
Անտրտում երջանկությունն է: (էջ 160)

Տրուբադուրների երգը համաշխարհային պոեզիայի պատմության հետաքրքիր օղակներից մեկն է: Այն ակետական միջնադարի մեջ կարծես իսկական քնարերգության արթնացումը եղավ, նրա մի նոր զարնամանուտը: Այլե՜ցուցիչ է այդ երգն իր ձևերի հարըստությամբ, գեղարվեստական կատարելությամբ: Գիտնականներն, իբրև զարմանալի երեկույթ, միահամուտ նշում են, որ տրուբադուրների՝ շուրջ 2500 միավոր կազմող երգերը տների հանգավորման գրեթե հինգ հարյուր տեսակ են տալիս: Գեղարվեստական այդ բազմազանությունը շատ բարձր է գնահատել նոր ժամանակների մեծագույն բանաստեղծներից մեկը՝ Ալեքսանդր Պուշկինը, որի տողերով էլ ավարտենք մեր խոսքը.

«Պոեզիան արթնացավ միջօրյա Ֆրանսիայի երկնքի տակ. ոռմանական լեզվում հընչեց հանգը: Առաջին հայացքից այնքան փոքր թվացող ոտանավորի այդ նոր զարդը կարևոր ազդեցություն ունեցավ նորագույն ժողովուրդների գրականության վրա: Ականջին հրճվանք է բերում հնչյունների կրկնակի շեշտվածությունը: Հաղթահարված դժվարությունը միշտ էլ մեզ բավականություն է պատճառում... Տրուբադուրները հանգախաղ էին անում, նրա համար բանատողերի բազմապիսի այլազանություններ հնարաստեղծում, գտնում ամենադժվարին ձևեր...»¹⁰:

В. П. ХАЧАТРИАН—Поэзия трубадуров. Наряду с песнями миннезингеров и труверов поэзия трубадуров является интереснейшим проявлением художественного развития средневековой Европы. Благодаря ей в лирике Запада начались процессы секуляризации и подступа к эпохе раннего Возрождения. В статье о точки зрения идейно-тематической, жанровой и художественной ценности охарактеризовано поэтическое наследие песнопевцев Прованса (XI—XIII вв.), дается общее представление об их наиболее выдающихся представителях.

¹⁰ А. С. Пушкин, Собрание сочинений в десяти томах, т. 6, М., 1976, с. 235.